

որուն Ղազան կը պատասխանէ, թէ «Ես ոչ գիտեմ զայդ, այլ Նաուուզն¹ գործեաց զամենայն»։ և Հեթումի խնդրանքով՝ կը հրամայէ առժամայն գրել հրովարտակ ընդ ամենայն աշխարհն իւր իշխանութեան, զի մի՛ իշխեսցեն ձեռնարկել յեկեղեցիս և ի քրիստոնէսյս, այլ խաղաղութեամբ բնակեսցէ ամենայն որ, զիւր հաւատ և պաշտօն համարձակ ունեցով։ Ըստ այսմ ալ կը սկսի խաղաղութիւն տիրել երկրին մէջ, և զըլխաւորապէս Հայերուն մէջ։ Իսկ Հեթում մեծաւ պատուով և շքեղաշք փառօք կը մեկնի Ղազանի մօտէն, և կը դառնայ «յաշխարհն իւր Կիլիկիա²»։

Հեթում Բէ առ Ղազան խան կատարած այցելութեան և պարագաներուն մասին վերջերս գտայ օտար կարեւոր ժամանակակից աղբիւր մը՝ որ շատ մը անորոշ կէտեր կը պարզէ և թուականներ կը ճշդէ։

Իրանօթ Անգլիացի Ասորագէտ Sir E. A. Wallis Budge վերջերս (1928) Ասորերէնէ Անգլիերէնի թարգմանած է երկու Նեստորական թաթարներու պատմութիւնը The Monks of Kublai Khan:

Այս Նեստորականները Ռապպան Սաու մա և Մարկոս արկածալից ողիսական մը ունեցան ժ.Վ դարուն։ Իրենց պատմութիւնը նախ գրուած կ'ըլլայ պարսկերէն լեզուով որմէ կը թարգմանուի Ասորերէնի, սակայն խիստ աղճատուած և անխնամ ու պակասաւոր։ Պարսիկ բնագրին պակսելուն պատճառաւ թարգմանիչը ստիպուած է գոհանալ ասորերէն անգոհացուցիչ թարգմանութեամբ՝ և ատկից է որ ես ալ հոս իմ կարգիս կ'օգտուիմ։

Հոս յիշուած Նեստորական երկու թաթարներէն մին՝ Մարկոսը այնքան յառաջացաւ որ հուսկ՝ հակառակ ասորերէն չգիտնալուն՝ Նեստորականներուն կաթողիկոս ալ ընտրուեցաւ։ Մարկոսի կաթողիկոսական պաշտօնական անունը Mar Yahbh-Allaha III. Մար Եազպհ Ալ-

լահա երրորդ՝ որուն օրով է որ Հեթում Բ Ղազանի այցելեց։

Հեթումի առ Ղազան այցելութեան պարագաներուն և թուականին մասին խօսող հատուածը հոս կը թարգմանեմ։ Պատմութիւնը մանրամասն տալէ վերջ Պայտունի մահը և Ղազան խանի յաջորդելուն առթիւ Նեստորականներուն դէմ Մահմետականներուն գործադրած վայրագութիւնները։ Նեստորականներուն կաթողիկոսը Մար Եազպհ Ալլահա Գրանտարկուած և զանաւորուած, կաթողիկոսարանը կողոպտուած կ'ըլլայ երբ «Այն ատեն Խերամ (Khetam կամ Հեթում) թագաւորը, Թագրուր (Takpur, Թագաւոր) Հայոց, վար իջաւ Ռապպան Սաու մաի կառուցած եկեղեցոյն մէջ, և շնորհիւ իր ճօխ նուէրներուն, և իր զինուորներուն, փրկեց կործանումէ։ Եւ կաթողիկոսը կրցած ըլլալով ազատիլ անոնց ձեռքէն՝ որոնք զինքը բռնած էին, հոն ապաստանեցաւ և հոն պահեց ինքզինքը այդ գիշեր։ Յաջորդ օրուան առաւօտուն, որ շարաթուան չորրորդ օրն էր (Չորեքշաբթի), Էմիր մը, որ վերը յիշուած Նաւրուզի ղեսպանն էր, եկաւ և նամակներ բերաւ կաթողիկոսին սպանութիւնը (հրամայող)։ Եւ մարդոցմէն շատերը ձեռքակալեց, որոնց մէջ էին նաեւ քանի մը հոգի թագաւորին (այսինքն Հեթումի) պատկանող, (և անոնց ըսաւ)։ Ինձի ցոյց տուէք կաթողիկոսը, որովհետեւ ես որոշ գործունիմ անոր հետ։ Երբ Մար կաթողիկոսը այս բանն իմացաւ՝ սիրտը դողաց և փախաւ եկեղեցիէն և թողուց թագաւորը, և թագաւորը խաղաղեցուց Էմիրը՝ անոր տուած որոշ նուէրներով, և ան մեկնեցաւ Մարաղա»։

«Բանի մը օր վերջ, թագաւորն ինքը մեկնեցաւ դէպի Թաւրիզ, և Մար կաթողիկոսը ձգտուեցաւ, և ինքն ալ գնաց իբր սպասաւորներէն մին, և թագաւորին ընկերացաւ մինչեւ Թաւրիզ քաղաքը, ուր հասած էր Ղազան թագաւորը։ Եւ կաթո-

1. Ասիկա Պայտունի դէմ մարտնչող Ղազան խանի զօրավարներէն մին էր, մահմետական և քրիստոնէս-

ական, որ հուսկ Ղազանի հրամանով ալ սպանուեցաւ։
2. Ազգագատում Բ. հատոր, էջ 1728.